

Աշոտ Վ. Ոսկանյան  
*Փիլիսոփ. գիյր. թեկնածու*

## «ԼԻՆԵԼ» ՀԱՅԵՐԵՆ

Մարտին Հայդեգերի «Գոյություն և ժամանակ»  
աշխատության մի քանի առանցքային եզրերի հայերեն  
թարգմանության խնդրի շուրջ\*

**Բանալի բառեր** – Հայդեգեր, փիլիսոփայական  
թարգմանություն, հիմնարար գոյաբանություն, գո-  
յություն, գոյ, ներ-կայություն, արտակայություն

### I

Քսաներորդ դարի մեծագույն փիլիսոփաներից մեկը՝ Մարտին Հայդեգերը (1889 – 1976), պատկանում է այն հազվագյուտ մտածողների թվին, որոնց համար լեզուն միտքն արտահայտելու պարզ միջոց չէ, այլ ստեղծարար խառնարան, որում միտքը ծնվում է, ձևավորվում և երևակվում: Խոսքի և մտքի այդ օրգանական միասնությունը, բնականաբար, դժվար թարգմանելի է, փաստորեն՝ անթարգմանելի: Դրա համար էլ, **մայրենի լեզվով ընթերցել Հայդեգերին, կնշանակի նորովի մտածել նրա միտքը՝ ենթարկվելով սեփական լեզվի օրինաչափություններին:**

Հայդեգերի փիլիսոփայական ուղու տարբեր փուլերում նրա լեզուն ուրույն դրսևորումներ է ունեցել: Սույն գրության մեջ մենք կանդրադառնանք փիլիսոփայի ամենանշանավոր երկի՝ «Գոյություն և ժամանակ»-ի (1927) առանցքային եզրերից մի քանիսի հայերեն թարգմանության խնդրին: Համաշխարհային փիլիսոփայության այդ գլուխգործոցի լեզվական յուրահատկությունն այն է, որ բներևութաբանության (Ֆենոմենոլոգիայի) և հերմենևտիկայի այն միասնությունը, որը Հայդեգերը հիմնավորել է տեսականորեն, նրանում ներկայացվել է լեզվական մակարդակով՝ որպես **ինքն-իրեն-իր-մեջ-ցույց-տվող խոսքի հայեցող հասկացում:** Հայդեգերն այս երկում չի հրաժարվել ապացուցողականու-

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 5.03.2015:

թյունից, միայն թե ապացույցները հաճախ առաջարկել է ոչ թե տրանսպարանսական դատողությունների ձևով, այլ որպես բներևութաբանական թափանցիկություն ձեռք բերած խոսքի ակնհայտություն, որը հասկանալի ոչ միայն **մեկնություն**, այլև **նայել-տեսնել** է պահանջում: Թվում է, թե այդ երկուսն էլ հաջողվել է մոբիլիզացնել գերմաներենի ողջ իմաստաստեղծ ռեսուրսը: Բայց անսպասելի այն է, որ փիլիսոփայի խոսքը դրանով **այլաբանական** կամ **փոխաբերական** հնչեղություն չի ստացել. տրակտատում օգտագործվող եզրերի խստությունը հասցված է այնպիսի աստիճանի, որ մասնագետները գերադասում են խոսել «Գոյություն և ժամանակ»-ի եզրաբանության **տեխնիկական բնույթի** մասին: Հենց դրանով էլ պայմանավորված են այդ զարմանալի գրքի լեզվի անկրկնելիությունը և նրա թարգմանության հետ կապված բոլոր դժվարությունները:

ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆ ԹՅՈՒՆ

## II

Հայդեգերի լեզվի մասին հայերեն խոսել համարձակվողը պետք է նկատի ունենա, որ մեզանում քչերն են շատ թե քիչ ճշգրտությամբ պատկերացնում փիլիսոփայի ուսմունքի իրական ուղղվածությունը: Հետևաբար, առաջարկվող վերլուծությանը պետք է նախորդի ներածություն, որում ընդհանուր գծերով ներկայացված է այն, ինչ ենթակա է թարգմանության: Մյուս կողմից, սակայն, հայդեգերյան հղացքն այնքան բարդ է, որ այն մի քանի խոսքով հասկանալի դարձնելու ամեն մի փորձ դատապարտված է անհաջողության: Իսկ ավելին ասելու համար պետք է առնվազն առանձին հոդված գրել՝ մի կողմ թողնելով մեզ հետաքրքրող բուն խնդիրը: Այս դժվարությունն աչքի առաջ ունենալով՝ մենք կսահմանափակվենք Հայդեգերի գլխավոր երկի հիմնական դրույթների թեզիսային շարադրանքով, հուսալով, որ այդ սխեմատիկ բացատրություններն ընթերցողի համար հենարան կծառայեն հետագա շարադրանքին հետևելու ընթացքում<sup>1</sup>:

ԳՐԱԿՐԱԳՐ, ԹԻՎ 1 (49) ԽՈՍՎԱԾ-ՄԱՍՈՒՐ, 2015  
Է (ԺԳ) ԳՐԱԿՐ, ԹԻՎ 1 (49) ԽՈՍՎԱԾ-ՄԱՍՈՒՐ, 2015

1. Հիմնական խնդիրը, որ Հայդեգերը փորձել է լուծել «Գոյություն և ժամանակ»-ում, **գոյության հարցն է**: Վերջինիս մասին խոսելու դժվարությունն այն է, որ գոյությունը մի կողմից «ամենուր» է և այդ իսկ պատճառով թվում է ինքնին հասկանալի, մյուս կողմից՝ տրված չէ մեզ «որպես այդպիսին», հետևաբար ենթակա չէ անմիջական նկարագրության:

2. Գոյությանը հասնելու համար Հայդեգերը դիմել է հուսեռյան բներևութաբանությանը, արմատապես վերաիմաստավորելով նրա երկու հիմնական սկզբունքները՝ **ընդհանուրի (կատեգորիալի) անմիջական հայեցողությունը** և **ինտենցիոնալությունը**:

3. Առաջին սկզբունքը հնարավոր է լուսաբանել պարզ օրինակով, որին հաճախ դիմել է ինքը՝ Հայդեգերը<sup>2</sup>: Եթե ուզում եք տեսնել «դեղի-

ՎԷՄ ԽՈՍՎԱԾՈՒՄԻ ԿԱՆՈՒՄԸ

<sup>1</sup> Ստորև ներկայացվող թեզերն ընդգրկում են «Գոյություն և ժամանակ»-ի շրջանին վերաբերող գաղափարների մի փոքր մասը միայն: Ավելի մանրամասն տեղեկություններ հայդեգերյան մտքի ելևէջների մասին ընթերցողը կարող է քաղել տողերիս հեղինակի հետևյալ հոդվածից՝ **Ա. Ոսկանյան**, «Գոյության» և «ներ-կայության» միջև. Մարտին Հայդեգերի փիլիսոփայական հղացքի ձևավորումը, «Գիտական աշխատություններ: Հասարակական գիտություններ», Պր. 5, Եր., «Լինգվա», 2007, էջ 65-103, ինչպես նաև հեղինակի «Հասկացման ակնուսափելիությունը» մենագրությունից, որը հրատարակության է պատրաստում ԵՊՀ հրատարակչությունը:

<sup>2</sup> Տե՛ս, օրինակ, **М.Хайдеггер**. Прологомены к истории понятия времени, Томск, «Водолей», 1998, с. 58.

նը», այն պետք է փնտրեք դեղին առարկաներում, ասենք՝ դեղին աթոռում, քանի որ դեղինը, «որպես այդպիսին», տրված չէ ինքնին. այն «հիմնավորված» է (fundiert) առանձին առարկաների մեջ: Դուք նայում եք դեղին աթոռին, բայց տեսնում եք «դեղինը»: Մյուս կողմից՝ ամեն առարկայի մեջ չէ, որ կարելի է գտնել այն, ինչ փնտրում եք: Առարկան պետք է դրա համար հարմար լինի, ասենք՝ շեշտված դեղին գույն ունենա: Այդ դեպքում այն կծառայի որպես «նմուշ» դեղնությունն ընկալելու համար: Այդպիսի «նմուշ-գոյերը» Հայդեգերն անվանել է «արտոնյալ գոյեր»:

4. Գոյությունն էլ, նույն կերպ, «հիմնավորված է» գոյերի մեջ: Բայց ոչ բոլոր գոյությունն ունեցող առարկաներն են հարմար «բուն գոյությանը» հասնելու համար: Այստեղ նույնպես «արտոնյալ գոյի» կարիք կա: Գոյության պարագայում այդ արտոնյալ գոյը մարդն է:

5. «Գոյություն և ժամանակ»-ում մարդը ներկայացվում է որպես յուրահատուկ գոյ, որը մյուս բոլոր գոյերից տարբերվում է **սեփական գոյությանը հաղորդված լինելու** շնորհիվ: Մարդն, ըստ Հայդեգերի, **ներկա գոյ է**, քանի որ ոչ թե պարզապես կա, այլ կա, **իր լինելն իր համար խնդիր ունենալով**: «Մարդկային գոյության բանն ինչ է» հարցի ձիշտ պատասխանը, ըստ Հայդեգերի, հետևյալը կլիներ. «Մարդկային գոյության բանը գոյությունն ինքն է»:

6. Հույս ունենալով, որ «մարդկային գոյության» ուսումնասիրությունը հնարավորություն կտա նրանում հայտնաբերել «գոյությունն ընդհանրապես», Հայդեգերը ձեռնամուխ է լինում մարդկային գոյության վերլուծական նկարագրությանը: Վերջինս՝ որպես «հիմնարար գոյաբանություն», կազմում է «Գոյություն և ժամանակ»-ի հիմնական բովանդակությունը:

7. Մարդու՝ որպես արտոնյալ գոյի նկարագրության համար Հայդեգերը դիմում է բներևութաբանության երկրորդ կարևորագույն սկզբունքին՝ «ինտենցիոնալությանը», այն դիտարկելով գոյաբանության դիրքերից: Եթե Հուստոլի մոտ ինտենցիոնալությունն օգտագործվում էր գիտակցության ակտերի ուղղորդվածությունը նշանակելու համար, ապա Հայդեգերը ցույց է տալիս, որ գոյության մասին հարցի պարզաբանման համար ներգրավված գոյի կոնկրետ տեսակը՝ **մարդը, ինքնին ինտենցիոնալ է**, այսինքն՝ «ուղղորդված է դեպի դուրս» և մշտապես դուրս է գալիս ինքն իր սահմաններից: Դա նշանակում է, որ գիտակցության ինտենցիոնալությունը, որի մասին խոսում էր Հուստոլը, միայն մասնավոր դրսևորումն է մարդու՝ աշխարհում լինելու այն յուրահատուկ կերպի, որի շնորհիվ գիտակցությունը միավորված է աշխարհի հետ: Այդպես ըմբռնված մարդն արդեն ոչ թե **առարկա է**, այլ **անձնավորություն**:

8. **Լինելու** այդ յուրահատուկ կերպը մտածողն անվանել է Dasein՝ **ներկայություն**<sup>3</sup>: Բառը բազմանշանակ է և, գոյությունից բացի, նշանակում է նաև պարզապես «այստեղ լինել»: Մարդու **հենց-այստեղ-և-հիմա-աշխարհում-լինելու** հանգամանքը շեշտելով, Հայդեգերը միանգամից երկու խնդիր է լուծում. մի կողմից՝ խուսափում է սուբյեկտիվիստական, զուտ հոգեբանական մեկնաբանություններից, մյուսից՝ շեշտում է, որ Dasein-ը չի կարող ըմբռնվել վերացականորեն: Այն միշտ **փաստական**

3 Արտասանել «դսիգայն»:

է: Մարդն իր անցյալով և ապագայով «արկանված է աշխարհ», այսինքն՝ միշտ գտնվում է կոնկրետ պատմական պայմաններում՝ իր առջև բացվող հնարավորություններին դեմ հանդիման: Աշխարհում լինելը այլ բան չէ, քան հնարավորություններից ընտրություն կատարելով, ապագային միտված ձեռնարկ իրականացնելը: Դրանով է, որ **եղելության** և **գալիքի** լարված դաշտում ինքն իր սահմաններից դուրս եկող մարդու գոյությունն ի սկզբանե ժամանակային է, հետևաբար՝ **պատմական**: Պատմականությունը իրադարձությունների սոսկական հաջորդականությունը չէ, այլ **գոյության այն որոշակի կերպը, որ հատուկ է մարդուն**<sup>4</sup>:

9. Մարդկային ներկայության վերլուծությանը նվիրված «հիմնարար գոյաբանության» ստեղծումը Հայդեգերն իր հիմնական խնդիրը չի համարել: Վերջինս միայն միջոց էր, **գոյության մարդկային կերպից՝ Dasein-ից** ելնելով, լուսանցք բացել դեպի Sein-ը<sup>5</sup>, այսինքն՝ **գոյությունն ընդհանրապես**: Հուսախաբ լինելով ընտրած ձանապարհից՝ նա անավարտ է թողել «Գոյություն և ժամանակ»-ը և դեպի գոյություն առաջնորդող այլ ուղիներ է փնտրել:

### III

«Գոյություն և ժամանակ»-ի լեզվամտածողության հայացման հնարավորությունները քննարկելիս, ներկա հրապարակման մեջ մենք կսահմանափակվենք հասկացությունների այն խմբով, որն այս կամ այն ձևով առնչվում է հայդեգերյան փիլիսոփայության առանցքային եզրին՝ «գոյությանը»: Կմեկնաբանվեն **«Sein»**, **«Seiendes»**, **«Dasein»**, **«Existenz»** և այլ՝ դրանցից ածանցված բառերը, ինչպես նաև **«ontisch»** և **«ontologisch»** ածականները:

1. Հայդեգերյան հղացքի ելակետային եզրը «Sein»-ն է, որը բնական է թարգմանել «գոյություն»: Գոյություն ունեցողի ողջ բազմազանությունը նշանակելու համար Հայդեգերն օգտագործում է Sein-ի հետ նույնարմատ Seiendes բառը, որը բառացիորեն նշանակում է «գոյավոր» կամ նույնիսկ «գոյող»: Sein-ը, դրան հակառակ, արտահայտում է բոլոր առանձին «գոյավորներին» հատուկ **գոյության հանգամանքը**: Այդ «հանգամանքն» ինքնին չի նույնանում առանձին գոյավորների հետ և չի կարող դիտարկվել որպես մեկը դրանց շարքում կամ նույնիսկ որպես հատուկ «արտոնյալ գոյ»: Ավանդական փիլիսոփայությունը և աստվածաբանությունը **գոյի** և **գոյության** այդպիսի խիստ տարբերակում չեն ձանաչում: Այսպես, հայերենում, որն այս առումով չի տարբերվում այլ եվրոպական լեզուներից, «գոյը» նշանակում է միաժամանակ և՛ **գոյություն ունեցող**՝ «որ գոյ իւրօք, գոյակ է, որ էն», և՛ **Աստված**՝ «ամենայն ինչ նովաւ գոյացեալ», և՛ **սուրստանց**՝ «գոյ, մանաւանդ՝ գոյք», իր մեջ միավորելով *τό όν*-ը և *όνσία*-ն, *ens*-ը և *substantia*-ն<sup>6</sup>:

Բայց Հայդեգերը հրաժարվում է «գոյությունը» որպես «ողջ գոյություն

4 Հայդեգերի նշանավոր նախակարապետը՝ Ս. Կիրկեգորը, ասում է. «Եթե Միքայել հրեշտակապետը գրի առներ Տիրոջ բոլոր այն համանարարությունները, որոնք կատարելու համար ինքը երբևէ երկիր է այցելել, դա չէր լինի նրա պատմությունը»: Տե՛ս **С. Кьеркегор**, *Понятие страха* // его же, *Страх и трепет*, М., «Республика», 1993, с. 150:

5 Կարդալ «գայն»:

6 Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Եր., 1979, էջ 569:

ունեցողի հիմք» դիտարկելուց՝ ինչպես քրիստոնեական Աստծո, այնպես էլ փիլիսոփայական «սուբստանցի» իմաստով: Դրանից ելնելով՝ մենք «Sein»-ի համար գերադասում ենք «գոյությունը», իսկ «Seiendes» բառն արտահայտում որպես «գոյ»՝ նկատի ունենալով, որ հայերենում «գոյը» արդեն իսկ գոյություն ունեցողն է, իսկ «գոյության» «-ություն» վերջավորությունը պարզորոշ ցույց է տալիս Sein-ի գոյաբանական տարբերությունը բոլոր «գոյավորներից»: Այսպիսով, «Seiendes» բառի հայերեն թարգմանությունը՝ որպես «գոյ», նպաստում է «գոյություն»-«գոյ» հասկացության զույգի ստեղծմանը, պահպանելով հայդեգերյան «Sein»-«Seiendes» երկանդամ կոնստրուկտի նույնարմատ կառուցվածքը և նրա իրական բովանդակությունը: Այն նաև լիովին համապատասխանում է «όνσια»-«τό όν» զույգին հունարենում՝ լեզու, որ Հայդեգերը, գերմաներենի հետ մեկտեղ, «ամենահզորը և ամենահոգևորն» էր համարում<sup>7</sup>:

Մեկ այլ դժվարություն կապված է Sein բառի բայական ձևի օգտագործման հետ: Գերմաներենում նրա գրությունը որպես **գոյական**՝ Sein, ըստ էության չի տարբերվում դրան աղերսված **բայի** գրությունից՝ sein: Սակայն բոլոր գոյականները մեծատառով գրելու գերմաներենի համար պարտադիր պահանջի շնորհիվ Sein-ը՝ որպես «գոյություն», պարզորոշ առանձնանում է sein-ից: Վերջինս մեզ մոտ գերազանցապես արտահայտվում է «լինել» բառի միջոցով: Այստեղ մենք հրաժարվել ենք ինքնին հասկանալի թվացող «գոյություն ունենալուց», հաշվի առնելով, որ Հայդեգերի խոսքը սովորաբար ոչ թե այս կամ այն գոյի **փաստացի առկայությանն** է վերաբերում, այլ **գոյություն ունենալուն որպես վիճակ**՝ «գոյելուն»: Այդ յուրահատուկ իմաստային երանգը ռուսերենում երբեմն փորձում են արտահայտել «бытийствовать» բառի միջոցով, որն, իհարկե, արհեստական կազմավորում է և որևէ ակնառու փիլիսոփայական իմաստ չի փոխանցում: Նույն պատճառով, տվյալ դեպքի համար խոտելի է «գոյել» հնացած բառի կիրառությունը: Հայդեգերի փիլիսոփայելու նպատակներից է եղել միշտ՝ ցույց տալ մարդու համար ամենամերձավորը, թեև չնկատվածը, այն տեսանելի և հասկանալի դարձնել ընթերցողին: Եվ երբ մենք հարց ենք տալիս, թե ի՞նչն է «նորմալ» մարդն ավելի լավ հասկանում՝ «գոյելը», «կենսվը», թե՞ «լինելը», բանավեճն ինքնաբերաբար ավելորդ է դառնում:

Այն, որ հայերենում «գոյությունը» և «լինելը» տարբեր արմատներից են սերում, հասկացման անհաղթահարելի դժվարություններ չի ստեղծում: Հայերենն այստեղ էլ բացառություն չէ: Երեսնականներին ստեղծած իր հռչակավոր երկում՝ «Մետաֆիզիկայի ներածության» մեջ, Հայդեգերը նշել է, որ «գոյություն» եզրում երեք տարբեր բառարմատների նշանակություն է միախառնված՝ **ապրելը, գոյանալը, տևելը**<sup>8</sup>: Սրանցից առաջինը հայերենում մեզ հայտնի է որպես «կեցություն»<sup>9</sup>, երկրորդը՝ «լի-

7 Տե՛ս **M. Heidegger**. Einführung in die Metaphysik, Tübingen, 1966, S. 43: (Ռուսերենում «Sein»-«Seiendes» իմաստային զույգը սովորաբար վերարտադրում են «бытие»-«сущее» երկանդամ միջոցով):

8 Ebd., S. 55.

9 Հայ նոր փիլիսոփայության մեջ գոյության հետ կապված իմաստային կոմպլեքսը հաճախ է արտահայտվում «կեցություն» եզրի միջոցով: Այդ ավանդույթն ըստ երևույթին կապված է Կ. Մարքսի «Կապիտալի» հայերեն թարգմանության հետ (1933 թ.): Վերջինիս հեղինակը՝ Թ. Ավդալբեգյանը, մարքսյան համապատասխան եզրն իրավացիորեն փոխադրել է որպես «կեցություն», քանի որ Մարքսի մոտ խոսքը հասարակական կյանքի մասին է: Թարգմանության

ներություն»<sup>10</sup>, երրորդը՝ «կայություն» կամ «կայում»<sup>11</sup>: Պետք է հաշվի առնել այս հանգամանքը և չընկճվել ֆունկցիոնալ առումով սերտորեն կապված եզրերի հիմքում ընկած հայերեն բառարմատների փոխառկայծումների պատճառով:

Նույնատիպ լեզվական անհամասեռություն կարելի է տեսնել նաև «sein» բայաձևի եզակի երրորդ դեմքում («ist»), որն, ըստ Հայդեգերի, առավել խորությամբ է արտահայտում մարդու՝ լեզվի մեջ ամրագրված գոյահասկացումը: Նախադասության մեջ կապի դեր կատարող այդ մասնիկը հայերենում բնական է թարգմանել որպես «է»: Դրա սուբստանտիվից, «է-ությունից» ներմուծվող իմաստային երանգը տեղին է. նույն գերմաներենում «ist»-ի անցյալ կատարյալը ստանում է «gewesen» ձևը, որն ուղղակիորեն աղերսվում է «Wesen»՝ «էություն», բառին<sup>12</sup>: «Լինելու» եզակի երրորդ ձևը նշանակելիս, «է»-ի հետ մեկտեղ, կարող է օգտագործվել նաև «կա»-ն, որի իմաստաստեղծ պոտենցիալը պայմանավորված է երկու հանգամանքով՝ «կայություն» և «գոյություն» բառերի ակնհայտ հարազատությամբ և «կայության» հիմքի վրա ձևավորվող մի քանի անհրաժեշտ եզրերի, որոնց կծանոթանանք ստորև:

2. **Լինելու** միայն մարդուն հատուկ կերպը Հայդեգերն անվանել է «Dasein»: **Բառն անթարգմանելի է:** Անգլիալեզու փիլիսոփայության մեջ այդ փաստի հետ հաշտվել են և եզրն օգտագործում են անփոփոխ՝ Dasein. Ֆրանսիացիները վերարտադրում են բառացի իմաստը՝ «l'être-là», կամ արտահայտում են այն նկարագրական ձևով՝ «réalité humaine»՝ «մարդկային իրականություն» (Սարտր): Ռուսները կիրառում են «присутствие» և «тут-бытие» եզրերը:

Հայդեգերի համար կենտրոնական այս հասկացության իմաստը բացորոշելու համար օգտակար է համադրել Dasein եզրի քերականական և փիլիսոփայական տեսանկյունները: Գերմաներեն «Dasein»-ում, որ նշանակում է «առկայություն», «գոյություն» կամ «կյանք» (դրա համար անհրաժեշտ պարզագույն նախադրյալների իմաստով), **գոյականը**՝ «Da-

ոչ բնադատական տարածումը մյուս դեպքերի վրա ոչ միշտ է համոզիչ: Այսպես օրինակ, «Աստծո կեցություն» արտահայտության մեջ անհամապատասխանությունն ի հայտ է գալիս լեզվական բնագրի մակարդակով. հարցն այն մասին, թե արդյո՞ք Աստված գոյություն ունի, բնական է, բայց ոչ որ չի կարող հարցնել. «կեցություն ունի, արդյոք, Աստված», չմեղանջեղով հայերենի դեմ: Ըստ «Հայկազյան բառարան»-ի՝ կեցությունը վերաբերում է բացառապես «կյանքին» (տես հատ. 1, էջ 1093): Մյուս կողմից, սակայն, «կեցություն» եզրի սահմանափակումը սոցիալականի ոլորտով պարտադիր չէ, ասենք՝ «գոյություն և գիտակցություն» արտահայտությունը խնդրահարույց է, քանի որ գիտակցությունն էլ գոյության իր կերպն ունի, այնինչ «կեցություն և գիտակցություն» արտահայտությունը ներքին բողոք չի առաջացնում:

10 «Լինելություն» լինելն, եղանիլն, ստեղծումն, արարչություն... ծնունդ, ծագումն: Հմայտ.՝ Γένεσις, Creatio, Genesis, generatio» (նույն տեղում, էջ 887): Աճառյանը «լինելը» կապում է հնդեվրոպական «bhin» արմատի հետ, որից ծագում են նաև «բոյն», «բնություն» բառերը (Տես Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1926, հ. 1, էջ 576): Նույն պատկերացումը գտնում ենք Հայդեգերի մոտ, որը «bhin», «bheu» արմատներն առնելով է հունարեն φῶσις բառի հետ և, որպես «բնություն», նաև՝ «ած», համարում է «գոյության» երեք իմաստաստեղծ քողարկիչներից մեկը: Տես **M. Heidegger**, Einführung in die Metaphysik, S. 54:

11 «Կայություն, կամ կայումն» կալն, կայանալն, կայուն գոլն, դադարումն: Հմայտ.՝ Στάσις, τό στάσιμου, Statio, constantia» (Հայկազյան բառարան, հատ. 1, էջ 1046):

12 Հայտնի է, որ «wes» հնդեվրոպական արմատն ընկած է «գոյություն» արտահայտող բառերի հիմքում: Այդ մասին խոսում են ինչպես Հայդեգերը, որը «sein» բառի «wes» արմատի հետ է կապում այնպիսի իմաստներ, որպիսիք են բնակվելը, կանգ առնելը, ներկա կամ բացակա լինելը (Einführung in die Metaphysik, S. 55), այնպես էլ Հր. Աճառյանը, որը նույն արմատից է մակաբերում գերմաներեն «war» (էի), «gewesen» (եղած) և անգլերեն «was» (էր, կար) բառերը: Տես Հր. Աճառյան, նույն տեղում, էջ 576:

ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆ ԹՅՈՒՆ  
Է (ԺԳ) Գրաբի, թիվ 1 (49) հունվար-մայր, 2015  
ՎԷՆ համահայկական համալեն

sein», և **բայր**՝ «da sein», փաստորեն համընկնում են: Դա թույլ է տալիս **սուբստանտիվի** կարգավիճակով օգտագործված բառն ընկալել որպես **բայի անկատար ձև** և դրանով շեշտել մարդկային կենդանի գոյության ներքին դինամիզմը, նրա կենսագործունեության պրոցեսուալ բնույթը: Բայց Գյունտեր Ֆիգալն այս կապակցությամբ իրավացիորեն հիշեցնում է, որ եթե Հայդեգերի միակ խնդիրը անձնավորության շարժունակության ցուցադրությունը լիներ, նա կարող էր լիովին բավարարվել «Leben» (կյանք) բառով<sup>13</sup>: «Dasein» և «Leben» բառերն իմաստային առումով շատ մոտ են, և վերջինս նույնպես հնարավոր է ընկալել որպես **ինֆինիտիվ** «Leben»-ը «կյանքն» է, իսկ «leben»-ը՝ «ապրելը»: Սրանով, իհարկե, Հայդեգերը մնալու էր **կյանքի փիլիսոփայության** դիլեմայան ծիրում: Այնինչ, «Dasein»-ի ներմուծմամբ մտածողը հնարավորություն է ստանում ակտուալացնել նաև «da sein» բայի լրացուցիչ՝ «այստեղ լինել», «ներկա գտնվել» իմաստները, որով այդ եզրը շեշտակիորեն մոտեցվում է ինքն իրեն հարաբերված, **արթուն** անձնավորության կիրկեգորյան ըմբռնմանը:

Ասվածը հայկական լեզվամտածողության ծիրում առավել ակնառու դարձնելու համար օգտակար է հիշել «առկա» և «ներկա» բառերի իմաստային տարբերությունը: Որևէ գոյ՝ քարը, փայտը, կենդանին և նույնիսկ փոքրիկ երեխան, կարող է լինել **առկա**, բայց չլինել **ներկա**՝ որոշակի ներքին **արթունության** իմաստով: Ընդ որում, խոսքն այստեղ գիտակցությամբ օժտված լինելու մասին չէ. մարդ (նաև երեխան) կարող է գիտակցություն ունենալ, բայց «ներկա» չլինել: Սրա լավագույն օրինակն է ռուսերեն «присутствие, при полном отсутствии» դարձվածքը, որ նկատի ունի ֆիզիկապես ներկա, բայց մտքերով այլուր դեգերող մեկին:

Վերն ասվածը «Dasein»-ը որպես «ներ-կայություն» թարգմանելու հիմք ենք համարել: Առաջարկված եզրում առկա տարանջատող գծիկը կոչված է արտահայտելու հայդեգերյան կոնցեպտի բազմիմաստությունը. այն շեշտում է **գոյության** (կա-յ-ության) բաղադրիչը, պահպանում ներքին սթափության՝ **ներկա լինելու**, կարևորագույն գործառնությունը և հնարավորություն տալիս տարբերելու այս յուրահատուկ եզրը պարզ «ներկայությունից» (Anwesenheit), որը նույնպես հաճախ օգտագործվում է հայդեգերյան հղացքի շրջանակներում:

Այլընտրանքային տարբերակը, որից ափսոսանքով ենք հրաժարվել, «աստ-գոյությունն»<sup>14</sup> է: Սրա առավելությունը բնագրին առավելապես մոտիկ լինելն է. այն արտապատկերում է «Da-sein»-ի քերականական ձևը և նրա պես նշանակում է «այստեղ լինել»: Բայց նրանում խնդրահարույց է «աստ» մասնիկը, որն, այնուամենայնիվ, էապես տարբերվում է գերմաներենի «da»-ից: Վերջինս անմիջական ներկայություն է արտահայտում և ավելի համապատասխանում է հայերեն «ահա» կամ նույնիսկ «այ» բառերին՝ «ահա սա» կամ «այ սա» արտահայտություններում: Այդ ձևով ներկա «ահա-գոյությունը» այլընտրանքի կարիք չունի, այնինչ «աստ-գոյության» մասին լսելիս, մարդ ինքնաբերաբար նաև «անդ-գոյություն» է պատկերացնում: Այս առումով մեր «աստ»-ը նման է Ռիկկեի «Hiersein»-ին, որը հենց դրա համար էլ «այստեղ լինել» է, քանի որ «այստեղ լինել»

13 Տե՛ս **G. Figal**. Martin Heidegger zur Einführung, Hamburg, Junius, 2003, S. 37-38:

14 Առաջարկը պատկանում է **Հակոբ Մովսեսին**:

ել կա: Այնինչ, «Dasein»-ի «da»-ն ունիվերսալ է. այն միևնույն ժամանակ կարող է ն «այստեղ» նշանակել (da und dort), ն «այնտեղ» (hier und da)<sup>15</sup>: Այդ պատճառով էլ «Dasein»-ի՝ որպես «այստեղ լինելու» հակառակը ոչ թե **այնտեղ** լինելն է, այլ այստեղ **չլինելը**: Նշյալ նկատառումներից ելնելով՝ մենք կզերադասենք «ներ-կայությունը», չմոռանալով, սակայն, «աստ-գոյության» մեջ ավելի ցցուն ի հայտ եկող մի էական հանգամանք. «Dasein»-ը «գուտ հոգեբանական» կամ, առավել ևս, «հոգևոր» ֆենոմենն չէ, այն կոչված է արտահայտելու մարդու գործուն և դինամիկ **ներ-կայությունը** փաստացի աշխարհում:

3. Ներ-կայության այդ յուրահատկությունը պարզաբանելու համար Հայդեգերը մտցրել է «Existenz» եզրը, որը գրեթե նույնքան դժվար թարգմանելի է: Բառն ինքնին թվում է ակնհայտ, քանի որ շատ եվրոպական լեզուներում օգտագործվում է որպես «գոյության» հոմանիշ: Բայց մեզ հետաքրքրող համատեքստում «Existenz»-ի և «գոյության» նույնացումն անթույլատրելի է: Ո՛չ այն արտաքին պատճառով, որ վերջինս արդեն «զբաղված» է, այլ որովհետև «Existenz»-ը՝ որպես **ներ-կայության գոյության յուրահատուկ կերպ**, ոչ միայն տարբերվում է գոյության սովորական ըմբռնումից, այլև հակադրվում է նրան: Բուն «գոյությունն» արտահայտելու համար «Existenz» բառի օգտագործումը Հայդեգերն անվանում է անմտություն (Gedankenlosigkeit): Նա գտնում է, որ հունարենում «ἐξίστασθαι» բառը (Existenz, existieren) ոչ թե «գոյություն ունենալ», այլ «գոյություն չունենալ» է նշանակում, քանի որ ցույց է տալիս տվյալ գոյի «իր կայացած կայունությունից դուրս գալու» ունակությունը<sup>16</sup>: Մեկ այլ տեղում («Նամակ հումանիզմի մասին») նա օգտագործում է Hinausstehen բառը, որը «դուրս կանգնել» է նշանակում: Այդ հանգամանքը մեզ հիմք է տվել հայդեգերյան հղացքի այս կարևորագույն եզրը թարգմանել որպես «արտակայություն»:

Այս կապակցությամբ բնական է հարցնել. ինչո՞ւ չէր կարելի «Existenz»-ն ընդհանրապես թողնել առանց թարգմանության, սահմանափակվելով հայատառ «էքզիստենց» կազմավորումով: Չէ՞ որ բառը սերում է լատիներենից՝ ոչ գերմաներենից, և «էքզիստենցիալիզմն» էլ վաղուց արմատավորված է հայերենում: Առավել ևս, որ Հայդեգերը, անդրադառնալով ներ-կայության՝ որպես ինտենցիոնալ գոյի, «ինքն-իրենից-դուրս-գտնվելու» գործառույթին, շեշտել է այդ գոյի գոյության «էք-ստատիկ» բնույթը, «Existenz»-ին համապատասխանող բայաձևը տառադարձել է որպես «ek-sistieren» և ակնարկել այն խորքային առնչությունները, որ «էքզիստենցն» ունի «էքստազի» պլատոնյան ըմբռնման հետ: Հեշտ է, սակայն, համոզվել, որ այդ լուծումն անիրագործելի է: Հայդեգերն «էք-զիստ-» բառարմատից այնքան տարբեր եզրեր է արտածել, որ հայերենում դրանց համապատասխանող իմաստների ճշտորոշ վերարտադրությունը հնարավոր է միայն բուն հայերենի լեզվական ողջ հարստության և ձկունության լրիվ օգտագործման պարագայում: Այսպես, ռուսը դեռ կարող է՝

15 Նշված նրբերանգի առաջացմանը նպաստում է նաև «da»-ին հատուկ ժամանակային գործառույթը, որը մեզանում առավել նկատելի է «այստեղ»-ի բարբառային տարբերակներում, որպիսիք են, ասենք, «իրես»-ը կամ «հեսա»-ն (հմնտ. «փրակոսը հեսա» և «հեսա կգամ»): Ցավոք, այս ձևերն իրենց ոչ գրական լինելու պատճառով չեն կարող հիմք ծառայել փիլիսոփայական եզրաստեղծման համար:

16 Stü «Nicht-sein heißt demnach: aus solcher sich ent-standenen Ständigkeit heraustreten» – M. Heidegger. Einführung in die Metaphysik, S. 49.

ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆ ԹՅՈՒՆ  
ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆ ԹՅՈՒՆ, 2015  
Է (ԺԳ) քաարի, թիվ 1 (49) հունվար-մայր, 2015  
ՎԷՆ համահայկական հանդես



existieren, exist կամ exister բայերի օրինակով ներմուծել արհեստական «экзистировать» բառը, բայց հայերենում «էքզիստելը» պարզապես անթույլատրելի է: Մյուս կողմից, սակայն, «գոյություն ունենալն» էլ պիտանի չէ, քանի որ անհնարին է Հայդեգերի միտքը տեղ հասցնել՝ հայտարարելով. **«Ժայռը կա, բայց այն գոյություն չունի: Ծառը կա, բայց այն գոյություն չունի: Ձին կա, բայց այն գոյություն չունի: Հրեշտակը կա, բայց այն գոյություն չունի: Աստված կա, բայց նա գոյություն չունի: ...Միայն մարդը գոյություն ունի»**<sup>17</sup>: Սա արսուրդ է: Բայց, օգտագործելով «արտակայություն» բառից մակաբերված բայական ձևը, մենք ասում ենք. **«Ժայռը կա, բայց այն չի արտակայում: Ծառը կա, բայց այն չի արտակայում: ...Աստված կա, բայց նա չի արտակայում: ...Միայն մարդն է արտակայում»**: Եվ այս ձևակերպումն ավելի քան հասկանալի է. ներ-կայությունը՝ որպես ինքն իր գոյությանն աղերսված գոյ, կա յուրահատուկ ձևով, և գոյություն ունենալու այդ կերպը կոչվում է **արտակայություն**:

Արտակայող գոյը մյուսներից տարբերելու համար Հայդեգերն օգտագործում է *daseinmäßiges Seiende*» արտահայտությունը, որ մեզ մոտ փոխադրված է որպես **ներ-կայակերպ գոյ**: Բոլոր չարտակայող գոյերը, համապատասխանաբար, **ոչ ներ-կայակերպ** են:

4. Մեզ մնում է հակիրճ անդրադառնալ «արտակայության» հիմքի վրա ստեղծված մյուս բառ-հասկացություններին: Արտակայող գոյի գոյակազմությունը, այսինքն՝ արտակայության կառուցվածքների փոխկապակցվածությունը, որը Հայդեգերն անվանում է *Existenzialität*, թարգմանված է **արտակայականություն**: Դրա հասկացման երկու մակարդակներն են. **արտակայականը՝** *existenziell*, որը կապված է ներ-կայության **նախավերլուծական՝ գոյական**, կազմության հետ (Հայդեգերի մոտ՝ *ontisch*), և **արտակայութենականը՝** *existenzial*, որով իրականացվում է այդ ֆենոմենի **վերլուծական, անալիտիկ** նկարագրությունը: **Վերջինս գոյաբանական է՝** *ontologisch*: Այստեղից ծագում է **ներ-կայության արտակայութենական անալիտիկան՝** *existenziale Analytik des Daseins*: Դրա արդյունքը՝ հիմնարար գոյաբանությունը, Հայդեգերն անվանում է *Fundamentalontologie*:

## IV

Ուշադիր ընթերցողն, անշուշտ, նկատել է, որ ներկայացվող նյութի վերնագրում բառախաղ կա: «Լինել հայերեն»-ը առնվազն երեք բան է ակնարկում. նախ՝ ներկայացված գրության նյութը «գոյությանը» վերաբերող եզրերի թարգմանությունն է, երկրորդ՝ մենք պարտավոր ենք նաև Հայդեգերի մտքի ծիրում **մտածել հայերեն**, և երրորդ՝ Հայդեգերին թարգմանելիս չի կարելի լինել վերամբարձ, պետք է հասկանալ, որ «գոյությունը» վերացականություն չէ, և նրան հակացուցված են սպեկուլյատիվ սահմանումները: Գոյությունն **ամենամոտիկն** է. նրա մասին հարցը շատ պարզ է հնչում՝ ի՞նչ է նշանակում լինել աշխարհում:

Խնդրի պարզության (բայց ոչ հեշտության) մասին է վկայում այն պարադոքսալ հարցը, որով Հայդեգերը սկսել է իր «Մետաֆիզիկայի ներա-

<sup>17</sup> Օրինակը վերցված է Հայդեգերի «Բնչ է մետաֆիզիկան» դասախոսության «Ներածություն»-ից:

ծությունը»։ «**Ինչո՞ւ կա գոյը և ոչ՝ ավելի շուտ, ոչինչը**»<sup>18</sup>։ Իսկ այն մասին, որ արդի իրողությունների համատեքստում նման հարցադրումը ոչ պատահական է, ոչ էլ ժամանակավրեպ, խոսում է դրա համահանձար գուգահեռականությունը Լյուդվիգ Վիտգենշտայնի նշանավոր թեզի հետ. «**Միստիկականը այն չէ, թե ինչպես կա աշխարհը, այլ այն, որ այն կա**»<sup>19</sup>։

Այս առնչությամբ կարող է Հայդեգերի հարցադրումների մեջ միստիցիզմ տեսնելու կամ – դրանից էլ վատթար – խնդրի «լուծումը» միստիկային վերապահելու գայթակղություն առաջանալ։ Այնինչ, Հայդեգերի կյանքի գործը **գոյության գաղտնիքի մասին ոչ միստիկական ձևով խոսելու կերպի որոնումն է եղել**։ Սա է, որ պետք է մտապահի հայդեգերյան տեքստերի ամեն մի թարգմանիչ։

**Աշոտ Վ. Ոսկանյան** – գիտական հետաքրքրությունների բնագավառները՝ հասարակական գիտությունների մեթոդաբանություն, փիլիսոփայական հերմենևտիկա, ազգային ինքնության հիմնահարցեր։

## Summary

### «BEING» IN ARMENIAN

On the issues of the translation into Armenian of some of the key terms of Martin Heidegger's work "Being and Time".

Ashot V. Voskanian

**Key words** – Heidegger, philosophical translation, fundamental ontology, Being, entity, Dasein, existence

The article discusses some problems of translation of Martin Heidegger's «Being and time» into Armenian. Some translation versions for such terms as «Sein», «Dasein», «Existenz» and their derivatives are proposed.

18 M. Heidegger. Einführung in die Metaphysik, S. 1. Այդ «մետաֆիզիկայի հիմնական հարցի» առաջին ձևակերպումը պատկանում է Լայբնիցին. նրանից հետո այս կամ այն փոփոխությամբ այն կրկնել են Շելինգը, Մաքս Շելերը և շատ ուրիշներ։

19 L. Wittgenstein. Tractatus logico-philosophicus, 6.44.

Резюме

### **«БЫТЬ» ПО АРМЯНСКИ**

О вопросах перевода на армянский язык некоторых ключевых терминов работы Мартина Хайдеггера “Бытие и время”.

Ашот В. Восканян

**Ключевые слова** – Хайдеггер, философский перевод, фундаментальная онтология, бытие, сущее, присутствие (тут-бытие), экзистенция

В статье обсуждаются некоторые проблемы перевода книги Мартина Хайдеггера «Бытие и время» на армянский язык. Предлагаются варианты перевода таких понятий как «Sein», «Dasein», «Existenz» и производных от них терминов.